

139. ՀԱՅՓՈՐԻ ՀՈՒՆԶ ԱՆՈՂԸ

Մի ուղա շատ ու ման կյալի, վրեր էժան մշակ ճարի, տանի հունձ անիլ։ Ինչքան ման ու կյալի, իրան ուղած կյինր մնին էլ ա ծրևոր չի տալի։ Մի մարթ մանրմ ա, վրեր մի հարուստ մարթ ուզրմ ա մշակ փոնի շատ էժան կյնով։ Կյալիս ա սրա կուշտը ասրմ ա. «Աղա՛, մշակ չե՞ս ուզրմ»։

Ասրմ ա. «Ուզրմ եմ»։

Ասրմ ա. «Ինձ վեկալ»։

Ասրմ ա. «Ի՞նչ տամ»։

Ասրմ ա. «Մի փոր հաց»։

Ասրմ ա. «Ա՛յ մարթ, մի փոր հացը տալ դեմ ու տալ, տու հախրտ ուդիս»։

Ասրմ ա. «Չէ՛, տիսլե՛ր, էտ ա իմ հախը, ինրուշ դատ չեմ ուզրմ»։

Էս ադեն համաձայնվրմ ա։ Վրեր ա ունրմ, պիրրմ տուն։

Ասրմ ա. «Աղա՛ ջան, դե պի ըռվտա հացը ուտեմ, վրեր քյնա՛մ հունձ»։

Սա լա՛վ-լա՛վ պաներ ա անրմ տրա դաքին։ Էս մարթը ուտրմ ա, սուփրեն տրտակրմ ա, պինդ ճլմկոտրմ ա։

Ադեն ասրմ ա. «Էտ ի՞նչ ա»։

Ասրմ ա. «Աղա ջան, դե պի մժա ճա՛շվա հացն էլ ուտեմ ու քյնա՛մ, մրչև ըռուցյու հնձեմ, մհել ճա՛շին կործից ետ չի տա՛ոնամ, հացի նստեմ»։

Ադեն ուրախանրմ ա, ասրմ ա. «Էս ինչ լա՛վ մշակ ա»։

Պիրըմ ա ճաշվա հացն էլ ա արա՝ ղաքին տնըմ։ Սա էտ էլ ա ուտըմ ու ըլետ վըեկենըմ, ճամլկոտըմ։

Աղեն ասըմ ա. «Հը՞, հմի ի՞նչ ես ուզըմ»։

Ասըմ ա. «Աղա ջան, մժա պի ըրգյունվա հացն էլ ուտեմ ու քյնամ, հնձեմ մչեվ լիսը»։

Աղեն ըրգյունվա հացն էլ ա տալի։ Սա էտ էլ ա ուտըմ, պրծնըմ ու թախտին նստըմ ա, սկսըմ տրխնին հանիլը։

Աղեն ասըմ ա. «Էտ ի՞նչ ես անըմ»։

Ասըմ ա. «Աղա՛ ջան, էտ հասակի մարթ ես, տեհե՞լ ես, վըեր մի շան տղա ըրդյունվա հացը ուտելուց եդը կործի քյնա՝։ Էնա ըրգյունվա հացը ուտիլուց եդը քնըմ են, էլի։ Տըեղս շհանց տու, վըեր քնեմ»։